Ազգ
Azg
3 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2013 ԵՐԵՔՇԱԲԹԻ 145(5228)
ISSN: 1829-1651

# Դիրքերի հստակեցում հակասիրիական գործողությունից առաջ

## *Փորձագետ. «Օբաման ընտրել է վատթարագույն տարբերակը»*

Շաբաթ օրը նախագահ Բարաք Օբամայի արած հայտարարության համաձայն՝ ամերիկացիները Սիրիային կհարվածեն ամենաշուտը եկող շաբաթ: Մինչ այդ տարբեր երկրներ նախապատրաստվում են եւ հստակեցնում իրենց դիրքերը: Սեպտեմբերի 2-ին հայտնի դարձավ, որ Արաբական ծովից Կարմիր ծով է մտել ամերիկյան «Նիմից» ավիակիրը 5 այլ ռազմանավերի ուղեկցությամբ: Արդեն Միջերկրական ծովում են ամերիկյան 5 էսկադրային ականակիրներ եւ «Սան Անտոնիո» դեսանտային նավը: Պարսից ծոցի շրջանում պարեկություն է անում «Հարրի Թրումեն» ավիակիրը:

Բուն Սիրիայում նկատվում են զորքերի տեղաշարժեր. զորքի ու տեխնիկայի մի մասը վերաբաշխվում է քաղաքացիական բնակչության մերձակայքում, Դամասկոսից հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը՝ վկայակոչելով մասնավորապես տեղաբնակներին:

Առաջիկա գործողությանը պատրաստվում են նաեւ Սիրիայի որոշ հարեւաններ՝ ԱՄՆ-ի դաշնակիցներ: Թուրքիայի վարչապետ Էրդողանը կիրակի օրը հավաստիացրել է, որ իր երկիրը կպաշտպանի Սիրիայի հետ կապված «ամեն մի միջազգային նախաձեռնություն», նույնիսկ՝ ՄԱԿ-ի ԱԽ որոշման բացակայության դեպքում:

Նույնպիսի դիրք է բռնել Ֆրանսիան: Ներքգործնախարար Մանյուել Վալսը հայտարարել է, որ եթե ՄԱԿ-ի ԱԽ-ն չկարողանա որոշում ընդունել, ապա հարկ կլինի կազմել հնարավորինս լայն կոալիցիա: «Քիմիական նյութերով Դամասկոսի բնակիչների զանգվածային սպանությունը չպետք է անպատիժ մնա», ասել է նա:

Սակայն երկրների մեծ մասը նախընտրում է գործել ըստ ՄԱԿ-ի մանդատի: Գլխավոր անակնկալը



մատուցեց, ինչպես հաղորդել էինք, Մեծ Բրիտանիան, որի խորհրդարանը օրերս մերժեց Սիրիա ներխուժելու ծրագիրը: Սիրիայի դեմ կռվելուց հրաժարվում են նաեւ Իտալիան, Հունաստանը, Կանադան:

Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը կիրակի օրը հայտարարեց, որ իր երկիրը կարող է գործել միայն ՄԱԿ-ի, ՆԱՏՕ-ի կամ Եվրոմիության մանդատի առկայության դեպքում: Ավելի վաղ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսենը ասել էր, որ տվյալ դեպքում ինքը չի տեսնում դաշինքի դերակատարության անհրաժեշտությունը, թեեւ չի կասկածում, որ հենց Սիրիայի վարչակարգն է քիմիական գրոհի ձեռնարկել: *Տես էջ 3*

# Թե ինչպես Պուտինը «փրկեց» Ալիեւին



ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Քաղաքագետների եւ մեկնաբանների ճնշող մեծամասնությունը Պուտինի այցը Բաքու գնահատել էր որպես Իլհամ Ալիեւին «աջակցության անթաքույց ցուցադրում»: Անցել է բավական ժամանակ, բայց թեման շարունակում է շրջանառվել: Ավելին, հայտնի են դառնում Ալիեւ-Պուտին հանդիպման նոր մանրամասներ: Մասնավորապես, երեկ haqqin.az-ի գլխավոր խմբագիր Ֆաթուլլաեւն այդ առթիվ գրեթե «արձանագրային» տեղեկություններ է հրապարակել, որոնց աղբյուրն, անկասկած, Իլհամ Ալիեւի աշխատակազմն է:

Ըստ այդմ, Պուտինի «անսպասելի այցը վերջակետ դրեց Իլհամ Ալիեւի դեմ Մոսկվայում եւ Բաքվում ծրագրված դավադրությանը»: Սույն հավաստիացումը հիմնավորված է նրանով, որ «Արեւմուտքն զբաղված է մերձավորարեւելյան խնդիրներով, Թուրքիան գտնվում է նոր օսմանականության ալիքի վրա, եւ միայն Ռուսաստանն է կայուն», ուստի եւ Պուտինն է ստանձնել Ադրբեջանում «իշխանության հաջորդայնության պահպանման պատասխանատվությունը»: *Տես էջ 2*

# «Դասագրքերի ստեղծման մեր համակարգն արդեն սպառվել է»



Կրթության ազգային ինստիտուտի փոխտնօրեն **Անահիտ Բախշյանը** կարծում է, որ դպրոցական դասագրքեր կազմելու գործընթացին ուսուցիչները պետք է ավելի ակտիվ մասնակցեն:

Երեկ «Հենարան» ակումբում Անահիտ Բախշյանը տեղեկացրեց, որ կրթության ու գիտության նախարարի՝ 2012-ի նոյեմբերի հրամանով այս տարի հրատարակվող բոլոր դասագրքերը պետք է անցնեին փորձարկում 90 դպրոցներում, սակայն 90 դպրոցներից միայն 12-ն են նորմալ կարծիք հայտնել դասագրքերի վերաբերյալ:

Ըստ Անահիտ Բախշյանի՝ ուսուցիչները դժգոհում են դասագրքերի որակից, սակայն դրանք կազմելու ժամանակ նույն ուսուցիչները պասիվ են, եւ դպրոցներում դասագրքերի փորձարկումը շատ վատ է կատարվել: Նույնիսկ որոշ առարկաների դասագրքերի տակ տնօրենները երկու տողով են եզրակացություն թողել գրեթե առանց ուսումնասիրելու դասագրքերը: «Ընդհանրապես դասագրքերի ստեղծման համակարգն այսօր իրեն արդեն սպառել է: Մեր երկրում դասագրքաստեղծման գործընթացն արմատապես պետք է փոխվի», հավելեց տիկին Բախշյանը:

Իսկ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի տնօրեն **Աշոտ Բլեյանը** նշեց, որ դասագրքերին ու տետրերին պետք է այլընտրանք դառնա համակարգիչը, եւ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում աշակերտներն այսուհետեւ դասերին հաճախելու են նեթբուքներով ու նոթբուքներով: Աշոտ Բլեյանը կողմնակից է ուսումնական գործընթացներում նորագույն տեխնոլոգիաների ներդրմանը, քանի որ շնորհիվ դրանց ուսուցիչն ինքն է դառնում արդեն դասի բովանդակության ստեղծողը. «Իսկ եթե նրան տալիս ենք դասագիրքը, ապա ուսուցիչը դառնում է զուտ դրա սպառողը»: Նույնիսկ կրթահամալիրում կիրառվող դասագրքերի տպագրմանը, ըստ Աշոտ Բլեյանի, իրենց ուսուցիչներն ունեն մասնակցություն, բայց քանի որ ներսում իրականացվում է հեղինակային կրթական ծրագիր, ապա դասագրքերից օգտվում են միայն աշակերտների ցանկության դեպքում: *Տես էջ 2*

# Կենսաթոշակների վճարումը՝ սեպտեմբերի 4-ից

Ինչպես տեղեկացանք սոցիալական ապահովության պետական ծառայությունից եւ «Հայփոստ»-ից, սեպտեմբեր ամսվա կենսաթոշակների վճարումը սկսվելու է սեպտեմբերի 4-ից՝ օրվա երկրորդ կեսից:

# Լեւոն Անանյանը տեղափոխվեց հիվանդանոց

**Հայաստանի գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը երեկ տեղափոխվեց «Նաիրի» բժշկական կենտրոն՝ լուրջ հիվանդության պատճառով եւ անմիջապես ընդունվեց վերակենդանացման բաժին:**

**Կատարյալ ապաքինում ենք մաղթում մեր հարգարժան մտավորական ընկերոջը:**

# Տիգրան Սարգսյան. «Վերջին երեք տարիներին այնքան սպառազինություն ենք ձեռք բերել, որքան նախորդ 20 տարիների ընթացքում»

Այսպիսի հայտարարություն է արել երեկ վարչապետ **Տիգրան Սարգսյանը** Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, ԼՂՀ պաշտպանության նախարար Մովսես Հակոբյանի ուղեկցությամբ այցելելով ԼՂՀ զորամասերից մեկը: Վարչապետը Հայաստանի կառավարության անունից շնորհավորել է բոլոր զինծառայողներին՝ ԼՂՀ-ի անկախության 22-րդ տարեդարձի կապակցությամբ. «Այս տոնն ունի պատմական նշանակություն ոչ միայն ԼՂՀ-ի բնակչության, այլեւ բոլորիս համար, քանի որ քաջ գիտակցում ենք, որ այստեղ է կերտվում ոչ միայն ԼՂՀ-ի, այլեւ հայ ժողովրդի ապագան, որովհետեւ սա պայքար է հայկական ինքնության համար, եւ դուք այդ պայքարի հենց առաջին ճակատում եք»:




Պատասխանելով Ադրբեջանի սպառազինման եւ այդ համատեքստում հայկական կողմից իրականացվող քայլերի վերաբերյալ զինվորներից մեկի հարցին՝ Տիգրան Սարգսյանը նշել է, որ Հայաստանի կառավարության առաջին կարեւորագույն կետը մեր երկրի անվտանգության ապահովումն է: «Դա նշանակում է ժամանակակից բանակ, ժամանակակից սպառազինություն: Վերջին երեք տարիներին այնքան սպառազինություն ենք ձեռք բերել, որքան նախորդ 20 տարիների ընթացքում: Այդ տեսակետից, կարող եք հանգիստ լինել, մենք երբեք թույլ չենք տալու, որ ուժերի հավասարակշռությունը խախտվի», ասել է վարչապետը:

Դիմելով զինվորներին՝ Տիգրան Սարգսյանը նշել է, որ ժամանակակից բանակում ամենակարեւորը հենց զինվորներն են՝ նրանց պատրաստվածության աստիճանն ու խիզախության մակարդակը: «Այդ առումով մենք ապացուցել ենք մեր հարաբերական առավելությունը: Միաժամանակ, դուք էլ պետք է հասկանաք, որ սպառազինությունից ավելի էական նշանակություն ունեն ձեր կեցվածքն ու խիզախությունը, որը պետք է պահպանեք», ասել է Հայաստանի վարչապետը:

Ա. Ս.

# Գնաճը Հայաստանում օգոստոսին հասել է 9,3 տոկոսի

## *Ամենամեծ գնաճը ծառայությունների ոլորտում*

2013-ի օգոստոսին 2012-ի օգոստոսի նկատմամբ գնաճը կազմել է 9,3 տոկոս: Այս ցուցանիշն է հրապարակել ազգային վիճակագրական ծառայությունը՝ ներկայացնելով սպառողական գների ինդեքսը: Այսինքն, գնաճը Հայաստանում դուրս է եկել ԿԲ նախանշած 4 տոկոս գումարած-հանած 1,5 տոկոս նպատակային միջակայքից եւ գրեթե կրկնակի գերազանցում է այդ ցուցանիշը: Միաժամանակ, 2013-ի օգոստոսին հուլիսի համեմատ գները չնչին աճ են ունեցել՝ 0,3 տոկոսով, 2012-ի դեկտեմբերի համեմատ գնաճը կազմել է 3,5 տոկոս, իսկ 2013-ի հունվար-օգոստոսին 2012-ի հունվար-օգոստոսի համեմատ գնաճը կազմել է 5,3 տոկոս:

Միայն պարենային ապրանքների գները 2013-ի օգոստոսին նախորդ տարվա օգոստոսի համեմատ աճել են 9,6 տոկոսով, իսկ այս տարվա հուլիսի նկատմամբ նվազել են 1,1 տոկոսով, ոչ պարենային ապրանքներինը՝ 2012-ի օգոստոսի նկատմամբ աճել են 4,3 տոկոսով, իսկ այս տարվա հուլիսի նկատմամբ՝ 0,1 տոկոսով, ծառայությունների գները նախորդ տարվա օգոստոսի համեմատ աճել են 11,2 տոկոսով, այս տարվա հուլիսի համեմատ՝ 2,6 տոկոսով: Բնական է, որ ծառայությունների գների մեծ աճը էներգակիրների սակագների աճով է պայմանավորված, որը նաեւ ընդհանուր բարձր գնաճի հիմնական պատճառն է:

Պարենային ապրանքներից օգոստոսին հուլիսի նկատմամբ արձանագրված 1,1 տոկոս գնանկման վրա անմիջական ազդեցություն է թողել բանջարեղենի եւ կարտոֆիլի, մրգի, շաքարավազի՝ 10,7-2,6 տոկոս գնանկումը: Միայն շաքարավազի գինը անցյալ տարվա օգոստոսի նկատմամբ նվազել է 12,8 տոկոսով, իսկ այս տարվա հուլիսի նկատմամբ՝ 2,6 տոկոսով:

Ձվի գները անցյալ տարվա օգոստոսի համեմատ աճել են 27,9 տոկոսով, այս տարվա հուլիսի նկատմամբ՝ 1,2 տոկոսով: Մսամթերք ապրանքախմբում անցած տարվա օգոստոսի նկատմամբ գրանցվել է 3,6 տոկոս գնաճ, այս տարվա հուլիսի նկատմամբ՝ 0,2 տոկոս: Մրգի ապրանքախմբում 2013-ի օգոստոսին 2012-ի օգոստոսի համեմատ արձանագրվել է 24,9 տոկոս գնաճ, իսկ անցյալ տարվա հուլիսի նկատմամբ՝ 0,2 տոկոս:

Ինչ վերաբերում է ծառայությունների բարձր գնաճին, ապա դա հիմնականում պայմանավորված է գազի եւ էլեկտրաէներգիայի սակագների բարձրացմամբ: 2013-ի հուլիս-օգոստոսին բնակչությանը մատակարարվող գազի սակագնի աճը կազմել է 18,2 տոկոս, էլեկտրաէներգիայինը՝ 30 տոկոս, իսկ օգոստոսին համապատասխանաբար՝ 5,7 տոկոս եւ 9 տոկոս:

Հիշեցնենք, որ սպառողական գների ինդեքսը ազգային վիճակագրական ծառայությունը որոշում է հիմք ընդունելով շուրջ 500 ապրանքների եւ ծառայությունների գների դինամիկան:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

**ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

# Նոր ուսումնական տարին նոր ծրագրերով, հին վարձավճարներով

**Սեպտեմբերի 2-ին հանրապետության ուսումնական հաստատություններում ազդարարվեց նոր ուսումնական տարին: Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում նույնպես մեկնարկեց 2013-2014 ուսումնական տարին՝ բակալավրիատի 1543 եւ մագիստրատուրայի 834 առաջին կուրսերի ուսանողների համար ազդարարելով մասնագիտական նվաճումների սկիզբը:**

**Մանկավարժի մասնագիտությունն ընտրած յուրաքանչյուր ուսանողի համար օրը խորհրդանշական էր: Վաղ առավոտից օրվան բնորոշ տրամադրություն էր տիրում համալսարանի բոլոր ֆակուլտետներում: Օրը հատկապես առանձնահատուկ էր առաջինկուրսեցիների համար: Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը համալսարանի գիտական գրադարանում ողջունեց եւ բարի մուտք մաղթեց բոլոր առաջինկուրսեցիներին: Բուհի օրհներգի, շնորհավորանքների եւ բարեմաղթանքների ներքո ուսանողները ոտք դրեցին վերակառուցված, տեխնիկապես համալրված համալսարան: Առաջինկուրսեցիները դիտեցին համալսարանի անցյալի, ներկայի եւ հաջողությունների մասին պատմող տեսաֆիլմ, որով էլ ամբողջական դարձավ նրանց պատկերացումը 90-ամյա պատմություն ունեցող ուսումնական հաստատության մասին:**

**Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմն այս տարի եւս համալրվել է հանրապետությունում լայն ճանաչում ունեցող մասնագետներով:**

**Հիշեցնենք, որ Մանկավարժական համալսարանում ուսման վարձավճարները չեն բարձրացել:**

# «Դասագրքերի ստեղծման մեր համակարգն արդեն սպառվել է»

*1-ին էջից*



**Իսկ երեկվանից սկսած 5-6 տարեկանից մինչեւ ավագ դպրոցում սովորողները եւ ուսուցիչները «Մխիթար Սեբաստացի» հաճախելու են անձնական համակարգիչներով: Ի դեպ, ինտերնետով էլ ապահովված են Հայաստանի բոլոր դպրոցները: Անահիտ Բախշյանը տեղեկացնում է, որ պետությունը բավականին շատ միջոցներ է դրել, որ ինտերնետ ունենան բոլոր դպրոցները:**

**Լրագրողներից մեկի հարցին՝ արդյոք աշակերտները պատրա՞ստ են սովորելու համակարգիչներով, թե՞ կօգտագործեն դրանք խաղերի համար, Անահիտ Բախշյանը պատասխանեց, որ նոթբուքները խաղերի համար օգտագործում են անգամ Ազգային ժողովի պատգամավորները...**

**Աշակերտների անձնական օգտագործման նեթբուքների ու նոթբուքների համար պետք է վճարեն ծնողները, այսինքն՝ կրթահամալիրը դրանք չի տրամադրում անվճար: Աշոտ Բլեյանն ասում է, որ պայմանագիր են կնքել «Արդշինինվեստ» բանկի հետ, եւ համակարգիչների գումարը ծնողները կարող են մարել 2 տարում:**

**Անահիտ Բախշյանը անդրադարձավ նաեւ ուսուցիչների վերապատրաստման հարցին, քանի որ նրանց պարբերաբար վերապատրաստումը շատ կարեւոր է: Տիկին Բախշյանն ընդգծեց, որ այս տարի կառավարությունը ուսուցիչների վերապատրաստման համար մի դրամ անգամ չծախսեց, եւ 8000 ուսուցիչ վերապատրաստվեց սեփական գումարով՝ հեռավոր գյուղից մեկնելով մի ուրիշ գյուղ կամ քաղաք, կամ գալով Երեւան: Ստեղծված անհարմարությունն, իհարկե, վերապատրաստման որակի վրա չազդել չէր կարող:**

**Ի. Պ.**

# Թե ինչպես Պուտինը «փրկեց» Ալիեւին

*1-ին էջից*

Դիտարժան է, որ Ֆաթուլլաեւի տեղեկացվածությամբ, Բաքվում Ալիեւ-Պուտին տետ-ա-տետ հանդիպումը «տեւել է անհավանական երկար՝ յոթ ժամ», որի ընթացքում զրուցակիցները «անդրադարձել են անցյալին, մտքեր փոխանակել տարածաշրջանային հարցերի վերաբերյալ, նախանշել ապագայի անելիքները»: Պուտինի այցի կարեւորությունն ադրբեջանցի լրագրողը սահմանել է մեկ բառով՝ «վերջ»:

Իմաստն այն է, որ Պուտինը «վերջ է դրել Իլհամ Ալիեւի դեմ ծրագրված դավադրությանը, որը պետք է զինված ապստամբության ձեւով դրսեւորվեր նախագահական ընտրությունների հաջորդ օրը, որպեսզի Բաքվի հին փողոցներում վերստին արյուն հոսեր»: Նման «բացահայտում» անելու համար, խոստովանենք, նախկին քաղբանտարկյալ լրագրողը պետք է որ ունենա ոչ միայն «ստուգված տեղեկություններ», այլեւ շատ ազդեցիկ հովանավոր:

Պարզ հասկացվում է, որ հրապարակման պատվիրատուն Իլհամ Ալիեւն է: Բանն այն է, որ Պուտինի այցից հետո ռուս-ադրբեջանական հարաբերությունների ջերմացման հրապարակային դրսեւորումներ չեն նկատվում: Փոխարենը մամուլ են ստրդում լուրեր, որ ռուսաստանյան իրավապահ մարմինները Մոսկվայում «նստել են էթնիկ ադրբեջանցի գործարարների պոչին»:

Ձերբակալվել է միլիարդատեր Թելման Իսմայիլովի բազմաթիվ ձեռնարկություններից մեկի գործադիր տնօրենը, որին մեղսագրվում է «մարդկանց ստրկական աշխատանքի պարտադրելու» հանցանք: Զանգվածային ստուգումներ են իրականացվում մեծածախ առեւտրի կետերում եւ շուկաներում, որոնց սեփականատերերն ազգությամբ ադրբեջանցի են: Այդ տեղեկությունները, անկասկած, ազդում են ադրբեջանական հասարակության գիտակցությանը:

Խնդիրը, սակայն, ինչպես ցույց է տալիս Ֆաթուլլաեւի հոդվածը, իշխանությունները ներկայացնում են այնպես, որ «ամեն ինչ ուղղված է դավադիր միլիարդատերերի դեմ, Պուտինը նրանց թուլացնում է հանուն Իլհամ Ալիեւի»: Այդպե՞ս է իրականում, թե՞ ոչ՝ տվյալ իրավիճակում կարեւորը ոչ թե փաստն է, այլ՝ թե ինչպես է այն մատուցվում:

Բայց ադրբեջանցի քաղտեխնոլոգները թույլ են տալիս վրիպում՝ ինչպես միշտ: Չէ՞ որ այդ կերպ երեւակվում է Իլհամ Ալիեւի «ուժեղ առաջնորդ լինելու» մասին տարիներով մշակված «տեսության» ողջ սնանկությունը: Վարչախումբն ակամա խոստովանում է, որ ոչ Արեւմուտքում ունի աջակցություն, ոչ նույնիսկ եղբայրական Թուրքիայում եւ հենվում է բացառապես Պուտինի «մեծահոգությանը»:

Այս կերպ Իլհամ Ալիեւը խոստովանում է, որ իր իշխանության աղբյուրը ոչ թե ադրբեջանական ժողովրդի կամքն է, այլ՝ ՌԴ նախագահ Պուտինի ցանկությունը: Սա ակնհայտորեն իրավիճակային «լուծում» է: Նախագահական ընտրություններից հետո գալու է «մուրհակները մարելու» ժամանակը: Ընդ որում, Իլհամ Ալիեւն ստիպված է լինելու «վճարել» ոչ միայն Պուտինին, այլեւ Արեւմուտքին եւ Թուրքիային նույնպես:

Ադրբեջանի պետական եւ իր մասնավոր փողերը գուցե թե կհերիքեն, որպեսզի հին խաղամոլը մարի պարտքերը: Բայց չէ՞ որ նախագահի կարգավիճակում նա պետք է նաեւ քաղաքական պարտավորվածությունների «մուրհակներ» մարի: Ամենահետաքրքրականն, այսպիսով, դեռ առջեւում է՝ ինչպե՞ս է Ադրբեջանը հաճոյանալու ե՛ւ «քեռի Սեմին», ե՛ւ «ռուսական արջին», ե՛ւ եղբայրական Թուրքիային: Ռուսաստանցի քաղաքագետներից մեկն օրերս vesti.az-ին ասել էր, որ «Մաքսային միությանն Ադրբեջանի միանալու հարցը Պուտինի այցից հետո կարելի է լուծված համարել»:

Եթե իրոք այդպես է, ապա շատ դժվար է ասել՝ Պուտինը փրկե՞լ է Իլհամ Ալիեւին, թե՞ նրան մատնել ավելի մեծ փորձության: Ավելացնենք նաեւ, որ կարծես իրականություն է դառնում մեր այն կանխատեսումը, որ «դավադրության» մեջ Իլհամ Ալիեւը կասկածում է նաեւ կնոջը եւ նրան հեռացրել է ասպարեզից: Օգոստոսի 26-ը Մեհրիբան Ալիեւի ծննդյան օրն էր, բայց ադրբեջանական լրատվամիջոցները բավարարվեցին տեղեկատվությամբ, թե պակիստանյան ինչ-որ թերթում նրա մասին հոդված է գրվել:

# ԵՊՀ-ն խախտել է վերջնաժամկետը

Հանրապետության պետական բուհերից միայն Երեւանի պետական համալսարանում է խախտվել առաջին կուրսի ուսանողների վարձավճարների մուծման վերջնաժամկետը, սեպտեմբերի 15-ի փոխարեն վերջնաժամկետը սահմանվել է սեպտեմբերի 6-ը:

Երեւանի պետական համալսարանի լրատվության վարչության պետ **Կարեն Գրիգորյանը** «Արմենպրեսին» տեղեկացրել է, որ ժամկետը կրճատելու պատճառը վարձավճարներն անկանխիկ ճանապարհով մուծելն է: «Նախկինում ուսանողներն իրենց ուսման վարձերը վճարում էին համալսարանի հաշվապահությունում, որտեղ հսկայական հերթեր էին գոյանում, այս տարվանից անկանխիկ ճանապարհով են վճարելու, ինչը կազատի նրանց արհեստական հերթերից, հետեւաբար ժամանակն էլ երկարաձգելու անհրաժեշտություն չի լինի», ասել է Կարեն Գրիգորյանը:

Այսուհետեւ ԵՊՀ-ում ուսման վարձերն անհրաժեշտ է մուծել 5-6 օրվա ընթացքում: Ստացվում է, որ ԵՊՀ-ն ուսման վարձերի թանկացմանը զուգահեռ խախտեց դրանք վճարելու վերջնաժամկետը:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 581841, 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

## Անցուդարձ

# Շոու Մաշտոցի պողոտայում

Մաշտոցի պողոտան երեկ վերածվել էր բախումների եւ էժանագին շոուի թատերաբեմի: Կեսօրին «Փակ շուկայի» տարածքում հավաքվել էին Սամվել Ալեքսանյանին (Լֆիկ Սամո) պատկանող ձեռնարկությունների աշխատակիցները՝ ի պաշտպանություն Ալեքսանյանի իրավունքների: Նրանք խոստովանեցին, որ Լֆիկին պատկանող ռեստորանների եւ «Երեւան-սիթի» սուպերմարկետների աշխատակիցներն են: Նրանք հայտարարում էին, թե արդար չեն համարում, որ հիմա պայքար է մղվում նոր աշխատատեղերի դեմ: Իրականում, սակայն, պայքարը մղվում է ոչ թե նոր աշխատատեղերի դեմ կամ որ շուկան չշահագործվի, այլ՝ հուշարձան-կառույցի աղճատման եւ այլանդակման դեմ: Սակայն այս պարզ խնդիրը անհնար էր բացատրել եւ հասկացնել աշխատակցուհիներին, այնպես, ինչպես իրենց գործատուին: «Բացում, բացում», «Մենք կողմ ենք աշխատատեղերի բացմանը», «Դավաճաններ, ժողովրդին պառակտում եք» եւ նմանատիպ վանկարկումներով նրանք բղավում էին, որ Սամվել Ալեքսանյանը բարերար է: «Չեն էլ ամաչում, եկել են էդ սուրբ մարդու դեմն են կանգնում», բղավում էին կանայք ու սպասում այն ակտիվիստներին, ովքեր պայքարում են հուշարձանի պահպանման համար:



Նախատեսված ժամին ակտիվիստները չեկան. նրանք դա բացատրեցին նրանով, որ չեն ցանկանում հասարակության երկու հատվածների միջեւ պառակտում մտցնել: Եթե մյուս կողմի ակտիվիստներն էլ գային տարածք, ապա դժվար չէ կռահել, թե ինչ տեղի կունենար: Ամենազավեշտալին այն էր, որ «Սիթիի» աշխատակցուհի կանայք տարածք էին եկել հովանոցներով, տարածքից մի փոքր հեռու կանգնած էին բազմաթիվ տղաներ, ովքեր ժամանակ առ ժամանակ զանգահարում ու վերադասներին տեղեկացնում էին, թե աշխատակցուհիներն իրենց ինչպես են պահել: Ալեքսանյանի շուրջ 1000 աշխատակիցների ցույցերի հետեւանքով Մաշտոցի պողոտայի երթեւեկությունը հայտնվել էր կաթվածահար վիճակում:

Տարածքում բազմաթիվ ոստիկաններ չէին կարողանում զսպել բողոքի ակցիայի մասնակիցներին, ովքեր դուրս էին փողոց եւ անդադար բղավում էին՝ Ալեքսանյան, Ալեքսանյան: «Ալեքսանյան» շոուն տեւեց մինչեւ ժամը 15:30: Ժամը 1-ից արեւի տակ գոռգոռացող եւ Լֆիկին բարերար հռչակած տիկնանց շշերով խմելու ջուր բերեցին: Սակայն միայն ջրի առկայությունը տատերին հիասթափեցրեց. ակտիվիստ տիկնանցից տատերը նաեւ քաղցած էին, բա բրդուճ չի՞ լինելու, ճշտում էին նրանք իրենց ջուր բաժանող տղաներից: Բրդուճը չեկավ:

Շուկայի պահպանման համար պայքարող ակտիվիստները Մաշտոցի պուրակում էին: «Ալեքսանյանական խմբից չենք վախենում», սակայն հասարակության մեջ պառակտում մտցնել չեն ցանկանում, հետեւաբար հեռվից կհետեւեն շուկայում շարունակվող բողոքի ակցիային եւ միայն շինարարության շարունակումից հետո կրկին կգնան «Փակ շուկա»:

Երեկ «Փակ շուկայի» վերաբերյալ հայտարարություն է տարածել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը: Անդրեասյանը մեջբերել է մշակույթի, քաղաքաշինության եւ Երեւանի քաղաքապետարանի ներկայացուցիչների հայտարարությունները՝ հավելելով, որ շինությունն ապօրինի է: Կառույցի գլխավոր պատասխանատու Երեւանի քաղաքապետարանը հայտարարել է, որ «Երեւանի թիվ 1 շուկա» ՍՊԸ-ի տնօրենը տեղեկացվել է Մաշտոցի պողոտայի 5 հասցեում գտնվող շուկայի տարածքում ապօրինությունները վերացնելու եւ դրանից հետո միայն քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան կառուցապատումը շարունակելու անհրաժեշտության մասին: Սակայն, ինչպես տեսնում ենք, քաղաքապետարանի պահանջը մինչ այսօր ոչ միայն չի կատարվել, այլեւ ավարտվել է «Փակ շուկայի» տարածքում ապօրինի կառույցների իրականացումը: Այլ կերպ ասած, քաղաքապետարանը ներողություն է քաշել, տեղեկացրել է, որ ապօրինի շինարարություն է ընթանում, սակայն Ալեքսանյանը, մեղմ ասած, բանի տեղ չի դրել, եւ դրանով քաղաքապետարանի առաքելությունն ավարտվե՞լ է: Եթե քաղաքապետարանն է պատասխանատու շինարարության պահպանման համար եւ եթե նկատել է, որ օրենք է խախտվում, ապա պետք է դիմեր իրավապահ մարմիններին եւ հարցը կարգավորեր օրենքի դաշտում, առանց ձեւականությունների եւ ժամկետանց զղջումների:

ՄԻՊ Կարեն Անդրեասյանը զարմացած է, որ եթե քաղաքապետարանն էլ չի դիմել, սակայն նման հայտարարություն է տարածել, ապա իրավապահ մարմինների ու առաջին հերթին ոստիկանության դիրքորոշումը պետք է այլ լիներ:

Այս առումով անհասկանալի է իրավապահ մարմինների եւ առաջին հերթին՝ ՀՀ ոստիկանության դիրքորոշումը: ՀՀ քրեական օրենսգրքով պատասխանատվություն է նախատեսված ինչպես ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից կրկնակի վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո ապօրինի շինության կառուցումը չդադարեցնելու համար, այնպես էլ պատասխանատու պաշտոնատար անձանց կողմից շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու միջոցներ չձեռնարկելու համար: Իրավապահ մարմինների կողմից մերժվել է քրեական գործի հարուցումը թե՛ վերը նշված եւ թե՛ պատմության ու մշակույթի հուշարձանները ոչնչացնելու կամ վնասելու հանցագործությունների դեպքերի կապակցությամբ, սակայն այդ որոշումների հիմնավորվածությունը վիճարկվելու է նաեւ դատարանում:

Մարդու իրավունքների պաշտպանն ակնկալում է նախ դատարանի կողմից քրեական գործերի հարուցումը մերժելու մասին որոշումների հիմնավորվածության մանրակրկիտ եւ անկողմնակալ ստուգում, երկրորդ՝ այս օրերին հուշարձանի մոտ իրականացվող բողոքի ակցիայի մասնակիցների բոլոր իրավունքների եւ օրինական շահերի, այդ թվում՝ անձնական անվտանգության եւ անձեռնմխելիության պաշտպանություն ոստիկանության կողմից:

Կատարված ապօրինությունների համար, ի վերջո, պետք է իրագործվի պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը, առավել եւս, երբ խոսքը վերաբերում է պետության հատուկ պահպանության ներքո գտնվող պատմամշակութային հուշարձանին:

Հ. Հ.

## ՌՈՒՍԱՍՏԱՆ

# «Դաղստանի քաղաքացի», կամ ինչպես փլուզել Ռուսաստանի Դաշնությունը

**Բանն այնտեղ է հասել, որ օգոստոսի 30-ին Բալթինֆո լրատվական գործակալությունը լուր տարածեց հետեւյալ վերնագրով. «Պետերբուրգում Դաղստանի քաղաքացին մեղադրվում է...»:**

**«Ռուսաստանյան Բալթինֆո պատկառելի գործակալությունից «Դաղստանի քաղաքացի» բառակապակցությունը լսելը ինձ թվում է ակնհայտ չափազանցություն նույնիսկ ամենա-ամենաների համար... Իմ կարծիքով, այստեղ գործունեության լայն ասպարեզ է բացվում դատախազության, քննչական մարմինների եւ ԱԴԾ-ի համար՝ ՌԴ սահմանադրական կարգի պաշտպանության նպատակով: ԶԼՄ-ներում նման սադրանքները չպետք է վրիպեն հասարակայնության եւ իրավապահ կառույցների ուշադրությունից: Գլխավորն է՝ աչքից բաց չթողնել Ռուսաստանի Դաշնությունը, ինչպես մեկ անգամ արդեն բաց թողեցինք ԽՍՀՄ-ը: Ժամանակին չկասեցվելու դեպքում ԶԼՄ-ների նմանօրինակ գործողությունները կհանգեցնեն ՌԴ քաղաքացիների տարանջատման ըստ ազգային եւ տարածաշրջանային հատկանիշների եւ վաղ թե ուշ կարող են անչափ տխուր հետեւանքներ ունենալ: Հանցագործներ կան աշխարհի յուրաքանչյուր երկրում, եւ հարկավոր է նրանց զատել այս կամ այն ժողովրդի ազնիվ ներկայացուցիչներից, լրատվական հաղորդումներում հանցագործներին չվերագրելով ազգային կամ տարածաշրջանային պատկանելություն», գտնում է Կովկասի ժողովուրդների ռուսաստանյան կոնգրեսի համանախագահ եւ Ռուսաստանի հայերի միության փոխնախագահ Լեւոն Մուկանյանը՝ մեկնաբանելով տվյալ միջադեպը իր Facebook-յան էջում:**

Պ. Ք.

# Հանդիպումներ Պատրուշեւի եւ Բորդյուժայի հետ

**Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանը մեկօրյա աշխատանքային այցով մեկնել է Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվա: Այցի ընթացքում Արթուր Բաղդասարյանը կհանդիպի իր գործընկեր՝ Ռուսաստանի Դաշնության Անվտանգության խորհրդի քարտուղար Նիկոլայ Պատրուշեւի հետ՝ քննարկելու երկկողմ համագործակցությանը, ս.թ. հունիս ամսին Ն. Պատրուշեւի՝ Երեւան կատարած այցի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման ընթացքին վերաբերող հարցեր: Արթուր Բաղդասարյանը կհանդիպի նաեւ ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժային, ում հետ կքննարկի Հայաստան-ՀԱՊԿ ռազմավարական գործակցությանը, ՀԱՊԿ շրջանակներում Հայաստանի գործունեությանը վերաբերող հարցերի լայն շրջանակ:**

# Դիրքերի հստակեցում հակասիրիական գործողությունից առաջ

*1-ին էջից*

**Հորդանանն իր ցամաքային եւ օդային տարածքն ամերիկացիներին չի տրամադրի Սիրիային հարվածելու համար: Ավելի վաղ նույնպիսի որոշում ընդունել էր Ավստրիան:**

**Արաբական պետությունների լիգան Կահիրեում իր խորհրդի արտակարգ նիստում ՄԱԿ-ին կոչ է արել միջամտել: Լիգայի մամլո քարտուղար Նասիֆ Խաթթին պարզաբանել է, որ համաարաբական կազմակերպությունը «որեւէ մեկին իրավունք չի տվել հարված հասցնելու Սիրիային»: Նրա խոսքերով. «Սիրիայի ճգնաժամի նկատմամբ լիգայի դիրքորոշումը համընկնում է միջազգային իրավունքի հարգման շրջանակներին»:**

**Օբամայի կարծիքով՝ հարվածի արդյունավետությունը կախված չէ այն հասցնելու օրվանից կամ շաբաթվանից: Ֆրանսիայի եւ Թուրքիայի պաշտպանությունը կարող է բավական ուժեղացնել հակասիրական դաշինքը: Օբաման կազմել է Սիրիային «սահմանափակ» հարված հասցնելու նախագիծ եւ սպասում է Կոնգրեսի թույլտվությանը: Սենատորներն իրենց աշխատանքը վերսկսելու են սեպտեմբերի 9-ին: Կոնգրեսականների եւ սենատորների զգալի մասը դեմ է ռազմական գործողությանը: Այդուհանդերձ, ինչպես կարծում է «Россия в глобальной политике» հանդեսի գլխավոր խմբագիր Ֆյոդոր Լուկյանովը, Օբաման կարող է ստանալ Կոնգրեսի հավանությունը: Դրա հետ մեկտեղ, ռուս փորձագետը «Վեդոմոստի» թերթին տված հարցազրույցում ընդգծում է, որ ՄԱԿ-ի որոշման բացակայության պայմաններում Կոնգրեսի օգնությանը դիմելով՝ Օբաման «ընտրել է վատթարագույն տարբերակը եւ թողնում է անվստահ ղեկավարի տպավորություն»:**

**«Ежедневный журнал» ինտերնետային հրատարակության գլխավոր խմբագիր Ալեքսանդր Գոլցը իր հերթին «Կոմերսանտ» թերթի էջերում կասկածներ է արտահայտում բուն գործողության հաջողության առնչությամբ: «Ռազմական տեսակետից դա դեպի անորոշություն տանող ճանապարհ է: Վատթարագույն բանը, որ կարելի է պատկերացնել, նախապես մասշտաբներով եւ ժամանակով սահմանափակված ռազմական գործողությունն է», նշում է վերլուծաբանը:**

Պ. Ք.

**Վաճառվում է**

4 սեն. բնակարան Եր. Քոչարի փ. (եկեղեցու մոտ, 16/11 հ., 103 քմ), մշտ. ջուր, հին վերանորոգում, փոխված էլ. լարեր, 2 պատշգամբ, գեղեցիկ տեսարան, արեւկող, գինը՝ պայմանագրային:

Հեռ.՝ 093-505-807, (010) 222-730

# Պատմաբաններ եւ հիստերիկներ

## *Պատմական ճշմարտության իրավական պաշտպանության անհրաժեշտության մասին*

***Ստորեւ թարգմանաբար ընթերցողի ուշադրությանն ենք հանձնում «Լիտերատուրնայա գազետա» մոսկովյան շաբաթահանդեսում լույս տեսած ուշագրավ հոդված, որն ընդդիմություն է եւ արժանի հակահարված ռուսաստանյան նեոֆաշիստական շրջանակներին, որոնց համար հիտլերական վայրագությունները եւ Թալեաթ-Էնվեր-Ջեմալ-Աթաթուրք ցեղասպանների արարքները դատապարտելի չեն:***

Ինչպես հայտնի է դարձել, ՌԴ Դաշնային ժողովի Պետդումայի քննարկմանը ներկայացվել է օրինագիծ, որը քրեական պատասխանատվություն է նախատեսում նացիզմի արդարացման համար: Անվտանգության եւ կաշառակերության հակազդման կոմիտեի նախագահ Իրինա Յարովայի ներկայացրած օրինագծի համաձայն, Միջազգային ռազմական դատարանի (Նյուրնբերգյան դատարանի) կայացրած դատավճռի ժխտումը, ինչպես նաեւ Երկրորդ աշխարհամարտի ժամանակ հակահիտլերյան կոալիցիայի երկրների բանակների՝ միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանմանն ուղղված գործունեության ժխտումը կամ ստահոդ տեղեկությունների տարածումը քրեապես պատժելի են տուգանքի եւ մինչեւ երեք տարվա բանտարկության ձեւով: ԶԼՄ-ների օգտագործմամբ ձեռնարկվող համանման արարքները կհանգեցնեն մինչեւ հինգ տարվա պատժի:

Զարմանալի չէ, որ նմանօրինակ օրենսդրական փոփոխությունների լոկ հնարավորությանը վերաբերող տեղեկատվությունը Ռուսաստանում նացիզմը վերականգնողների որոշ խավերի գցել է գրեթե հիստերիկ վիճակի մեջ: Օրենքը դեռ չի ընդունվել, բայց արդեն հիմա Իրինա Յարովայի եւ ամբողջ պատգամավորական կորպուսի դեմ ուղղվում են ամբողջական գրաքննություն եւ ստեղծագործական ինքնարտահայտման ճնշում իրականացնելու մեղադրանքների հեղեղ: Չենք մեջբերի «պատմության ազատ մեկնիչների» զայրացկոտ արձագանքները, ովքեր տարօրինակ զուգադիպությամբ նախընտրում են համառորեն չնկատել, օրինակ, «Մեր մայրերը, մեր հայրերը» գերմանական խայտառակ ֆիլմը, որը գերմանաֆաշիստական զավթիչներին ներկայացնում է որպես սկզբունքորեն բավական լավ տղաների, որոնք ազնվորեն կատարում էին հրամանը՝ ի տարբերություն խորհրդային զինվորների եւ խորհրդային ժողովրդի՝ անխիղճ անասունի, որը չգիտես ինչու հանդգնել էր դիմադրել քաղաքակիրթ «ազատարարներին»: Սրանից հետո արդեն չենք զարմանում, երբ, օրինակ, Մոսկվայի մետրոպոլիտենի կենտրոնական կայարանների մուտքերի մոտ ոմանք կոչ են անում ուսումնասիրել «ազատարար» Հիտլերի «Իմ պայքարը» գիրքը կամ դաշնային զինվորական գերեզմանատունը «ընտանի կենդանիների գերեզմանոց» անվանող գերազասական լրագրողուհու անձնական կայքէջի գրառումները:

Եթե համաձայնենք, որ ամենաթողության վերածվող ներկայիս բացարձակ ազատության պայմաններում չէր կարելի բացառել, որ Ռուսաստանի դաշնային ալիքները եւ վերջ ի վերջո հայրենական հեռուստադիտողին կցուցադրեին թեկուզ «մեղմ», բայց շատ բացահայտ նացիստամետ քարոզչության ռուսերեն կրկնօրինակված տարբերակը:

Այդ կարգի ռեւիզիոնիստական փորձերից են նաեւ ոչ միայն նախկին ԽՍՀՄ տարածքում նացիստների վայրագությունները եւ, ասենք, հրեա ժողովրդի ողջակիզումը ժխտելու, այլեւ Հայոց ցեղասպանությունը՝ 20-րդ դարում մարդկանց խմբի առաջին զանգվածային բնաջնջումը ուրանալու փորձերը: Այդ եղեռնագործության հեղինակների (փոքր բացառությամբ) հենց անպատժելիությունն էր ոգեշնչում նացիստ հանցագործներին: «Հիմա ո՞վ է հիշում Հայոց ցեղասպանությունը» արտահայտությունը տարածում գտավ հենց Երկրորդ աշխարհամարտի օրերին հրեաների եւ մյուս ժողովուրդների դեմ նացիստների զանգվածային հանցագործությունների ժամանակ:

1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունված Ցեղասպանության ոճիրը կանխելու ՄԱԿ-ի կոնվենցիայի համաձայն, ցեղասպանություն ասելով հասկանում ենք գործողություններ, որոնք կատարվում են որեւիցե ազգային էթնիկական, ռասայական կամ կրոնական խումբ որպես այդպիսին լրիվ կամ մասամբ բնաջնջելու դիտավորությամբ: Երկհատոր «Ցեղասպանության հանրագիտարանի» խմբագիր, այդ թեմայի ճանաչված գիտակ Իսրայել Չառնիի բնորոշման համաձայն, նաեւ «լայն իմաստով ցեղասպանություն է զգալի թվով մարդկանց զանգվածային սպանությունը ոչ թե միմյանց դեմ տարբեր զինված ուժերի մարտական գործողությունների ընթացքում, այլ զոհերի անպաշտպանության եւ անօգնականության պայմաններում»:

Այստեղ նշենք, որ բուն «ցեղասպանություն» եզրույթը 1944 թվականին առաջարկեց լեհ իրավաբան, պրոֆեսոր Ռաֆայել Լեմկինը, որի ընտանիքը ողջակիզման զոհ դարձավ: Եվ հենց Օսմանյան կայսրության հայ բնակչության ոչնչացումն էր այն խոշորամասշտաբ ոճրագործությունը, որ դոկտոր Լեմկինը նկատի էր առնում որպես ցեղասպանության իրական հիմք: «Ցեղասպանություն» եզրույթի ստուգաբանությունը հունարեն «genos» (տոհմ, ցեղ) եւ լատիներեն «caedere» (սպանել) բառերի զուգորդությունն է: Հետագայում Նյուրնբերգի միջազգային դատարանը նացիստական Գերմանիայի նախկին ղեկավարներին դատապարտեց մարդկության դեմ ուղղված հանցագործությունների համար՝ դատավճռի մեջ «ցեղասպանություն» հասկացությունը ներառելով որպես ֆաշիստների կատարածի նկարագրություն:



*Ծաղիկներ Հայոց ցեղասպանության հուշահամալիրի անմար կրակի մոտ*

Ուստի, ելնելով մասնավորապես նաեւ այն սկզբունքից, որ պետք է հիմք ընդունել ակունքները (մանավանդ որ դա թե՛ պատմականորեն ճիշտ է եւ թե՛ իրավաբանորեն հիմնավորված), հարկավոր է առաջարկվող օրինագծում մյուս հանցագործությունների կողքին հիշատակել նաեւ հայերի դեմ գործված ոճիրը: 20-րդ դարի այդ առաջին լայնընդգրկուն եղեռնագործության ճշմարիտ էությունն ու իմաստը համապատասխան իրավական գնահատականի արժանացան հենց «ցեղասպանություն» եզրույթի մեջ, որն ամրագրված է աշխարհի քսանից ավելի երկրների (այդ թվում՝ Ռուսական կայսրության, իսկ հետագայում՝ Ռուսաստանի Դաշնության) իշխանության մարմինների տարբեր մակարդակի որոշումներում: Տվյալ եղեռնագործության առաջին միջազգային արձագանքն արտահայտվեց 1915-ի մայիսին հենց Ռուսաստանի առաջարկությամբ Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ Մեծ Բրիտանիայի ընդունած համատեղ հայտարարության մեջ, որտեղ հայ ժողովրդի դեմ ուղղված վայրագությունները բնորոշվեցին որպես «նոր հանցագործություններ մարդկության եւ քաղաքակրթության դեմ»: Կողմերը համաձայնել էին, որ թուրքական կառավարությունը պետք է պատժվի ոճիր գործելու համար:

Օսմանյան կայսրության եւ «նոր», քեմալական Թուրքիայի տարածքում հայ բնակչության ոչնչացման բազմաթիվ փաստերը հետագայում իրենց արտացոլումը գտան ՌԴ Դաշնային ժողովի Պետդումայի 1995 թ. ապրիլի 14-ի որոշման մեջ: Տեքստում նշվում է.

«Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Պետական դուման, հիմնվելով Արեւմտահայաստանի տարածքում 1915-1922 թթ. հայերի բնաջնջման մասին վկայող անհերքելի պատմական փաստերի վրա, հետեւելով Ցեղասպանության ոճիրը կանխելու եւ դրա համար պատժելու ՄԱԿ-ի կոնվենցիայի (9 դեկտեմբերի, 1948 թ.) եւ Պատերազմական հանցագործությունների եւ մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետի անկիրառելիության կոնվենցիայի (26 նոյեմբերի, 1968 թ.) ոգուն ու տառին, ձգտելով վերածնել Ռուսական պետության մարդասիրական ավանդույթները, հիշեցնելով, որ Ռուսաստանի նախաձեռնությամբ եվրոպական մեծ տերությունները դեռ 1915 թ. հայ ժողովրդի նկատմամբ թուրքական կայսրության ձեռնարկած գործողությունները որակեցին որպես «մարդկության դեմ ուղղված հանցագործություն», նշելով, որ եղբայրական հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումը իր պատմական հայրենիքում կատարվել է Ռուսաստանի քայքայման պայմանների ստեղծման նպատակով, դատապարտում է հայերի 1915-1922 թթ. բնաջնջման կազմակերպիչներին, իր կարեկցանքը հայտնում հայ ժողովրդին եւ ապրիլի 24-ը համարում ցեղասպանության զոհերի հիշատակի օր»:

Այստեղ հարկ է նշել, որ հայերի դեմ գործված ոճիրները ամրագրված են նաեւ բուն Թուրքիայում 1919-ին սկսված դատավարության հետեւություններում ու գնահատականներում, երկիր, որը Գերմանիայի նման պարտություն կրեց Առաջին աշխարհամարտում:

Սուլթան Մեհմեդ 6-րդ Վահիդեդդինի (1918-1922) հատուկ հրամանագրի համաձայն, 1919 թ. մարտի 8-ին երիտթուրքերի կուսակցության առաջնորդների եւ նախարարների դատական գործը հանձնվեց Կոստանդնուպոլսի արտակարգ զինվորական դատարանի քննությանը: 1919-ին վեզիր Ֆերիդ փաշան նույնպես դատապարտեց երիտթուրքական կառավարության իրականացրած հանցավոր ծրագիրը: Դատավարությունը սկսվեց 1919 թ. ապրիլի 27-ին երկրի այն ժամանակվա մայրաքաղաքում եւ ընդմիջումներով շարունակվեց մինչեւ հունիսի 26-ը (13 նիստ): Դատական քննությունների ընթացքում դատապարտվեցին հեռակա 11 եւ ներկա գտնվող 20 պետական ու կուսակցական բարձրաստիճան անձինք:

Երիտթուրքերի գործով դատապարտվածների դատավճիռը հրապարակվեց 1919 թ. հուլիսի 5-ին: Չորս ոճրագործներ՝ ներքին գործերի նախարար, երիտթուրքերի կուսակցության կենտրոնական կոմիտեի նախագահ եւ մեծ վեզիր (1917-1918) Թալեաթ փաշան, ռազմական նախարար Էնվեր փաշան, Առաջին աշխարհամարտի տարիներին Սիրիայի 4-րդ բանակի գլխավոր հրամանատար Ջեմալ փաշան, հատկապես հայերի եւ մյուս «անհաճո» ժողովուրդների ներկայացուցիչների սպանության համար ստեղծված «Թեշքիլաթ-ի Մախսուսե» հանցավոր կազմակերպության անդամ, կրթության նախարար դոկտոր Նազիմը, հեռակա կարգով դատապարտվեցին մահվան: Մյուս 27 մեղադրյալների մեծամասնությունը դատապարտվեց ազատազրկման: Սակայն Թուրքիայում Մուստաֆա Քեմալ փաշայի (որը հետագայում իրեն անվանեց Աթաթուրք) իշխանության գլուխ անցնելուց հետո այդ բոլոր պատիժները փաստորեն ի չիք դարձան: Եվ դա արվեց այն պատճառով, որ Մուստաֆա Քեմալն ինքը ակտիվորեն մասնակցել էր Օսմանյան կայսրությունում հայ եւ հույն բնակչության ոչնչացմանը:

Մուդրոսի զինադադարից հետո ջարդերի եւ տեղահանությունների ժամանակ ողջ մնացած հայերը սկսեցին վերադառնալ Կիլիկիա՝ հավատալով հայկական ինքնավարության ստեղծմանն օժանդակելու դաշնակիցների խոստումներին:

1920 թվականի օգոստոսի 10-ին Թուրքիայի սուլթանական կառավարությունը եւ պատերազմում հաղթած դաշնակիցները ստորագրեցին Սեւրի պայմանագիրը, որի համաձայն Հայաստանը պետք է ստանար Վանի, Էրզրումի եւ Բիթլիսի վիլայեթների զգալի մասը, ինչպես նաեւ Տրապիզոնի վիլայեթի մի մասը համանուն նավահանգստով: Սակայն պայմանագիրը մնաց թղթի վրա. 1920 թ. սեպտեմբերին թուրքերը պատերազմական գործողություններ սկսեցին Հայաստանի դեմ: Պատերազմն ավարտվեց Հայաստանի Հանրապետության պարտությամբ. թուրքերը ստացան Կարսի մարզը եւ Սուրմալուի գավառը:

1922 թվականի սեպտեմբերին Աթաթուրքի հրամանով թուրքական զորքերը մտան Զմյուռնիա (Իզմիր): Յոթնօրյա սպանդի ընթացքում զոհվեց մոտ 100 հազար մարդ:

Եվ այն, որ Թուրքիայում նախընտրում են չհիշել այդ եւ շատ ուրիշ հանրահայտ փաստերը (թեեւ այնտեղ եւս իրավիճակն աստիճանաբար փոխվում է), բնավ չի նշանակում, թե դա պետք է մոռանալ «քննարկումների ազատության» վկայակոչումներով քողարկվող «օսմանյան ոգու» կամ «արիական ռասայի» երկրպագուները:

Աքաթուրքի անձի պաշտամունքից եւ իրենց կուռքին սրբացրած քեմալականներից հեռանալու Թուրքիայի ներկայիս վարչապետ Էրդողանի քաղաքականությունը հանգեցրեց այն անկարգություններին, որոնք սկսվեցին Ստամբուլում 2013 թ. հունիսի 1-ին եւ (ընդհատ) շարունակվում են մինչեւ օրս:

Եվ այս համատեքստում (նկատի ունենալով Ռուսաստանի Դաշնության եւ աշխարհի այլ երկրների պաշտոնական դիրքորոշումը) առնվազն տարակուսանք է հարուցում Հայոց ցեղասպանության փաստի կապակցությամբ հունիսի 11-ին պրոֆեսոր Մ. Ս. Մեյերի ելույթը «Կուլտուրա» հեռուստաալիքի «Փաստի իշխանությունը» հաղորդման ընթացքում: Հաղորդավարի «Ինչո՞ւ է այդքան ուժգնորեն արգելված Հայոց ցեղասպանության թեման» հարցին պարոն Մեյերը պատասխանում է բառացիորեն հետեւյալը.

- Ես կարծում եմ՝ դա պայմանավորված է նրանով, որ Անտանտը փորձել է շահարկել այդ թեման: Ասում են, թե ամեն ինչում իբր մեղավոր են մահմեդականները, իսկ անմեղները հայ քրիստոնյաներն են: Թեպետ իրականում, իհարկե, այնտեղ եղել է ջարդ երկու կողմերից:

Հաղորդավարի «Իսկ որքա՞ն են արդարացված թվերը, որ լսում ենք» հարցին հետեւում է այս պատասխանը.

- Սա մեր ընդհանուր խնդիրն է: Ըստ հաշվարկների՝ այնտեղ եղել է ընդամենը մեկուկես միլիոն հայ, եւ քանի որ ինչ-որ մասը պահպանվել է, չի կարելի ասել, թե այդ մեկուկես միլիոնը տուժել է: Կարծում եմ նույնիսկ, որ վերջ ի վերջո եղել են ամեն տեսակ կորուստներ ոչ միայն կրակելու, սպանելու պատճառով. շատ-շատերը մահացան սովից...

Մինչդեռ տակավին 2006 թ. Երեւանում, «Ժողովրդավարության կովկասյան ինստիտուտի» զարգացման հիմնադրամի մամլո ասուլիսում Միխայիլ Մեյերը ասում էր բառացիորեն հակառակը. «Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թ. ցեղասպանության ճանաչման տարբերակներից մեկը կարող է դառնալ Հաագայի դատարանին դիմելը...»: Հենց այն ժամանակ էլ նա ընդգծեց, որ «ոչնչացվեց հայ բնակչության կեսը, ինչով էլ լուրջ հարված հասցվեց հայերի գենոֆոնդին»:

Նրա խոսքերով, 20-րդ դարասկզբին երիտթուրքերի դատավարության ընթացքում ընդունվեց, որ իրականացվել է հայերի զանգվածային բնաջնջում. «Առաջին աշխարհամարտի ժամանակ «ցեղասպանություն» եզրույթը չկար, բայց դրանից ոչինչ չփոխվեց»: Նրա այն ժամանակվա կարծիքով՝ «Թուրքիային սարսափեցնում է ոչ այնքան Հայաստանի տարածքային պահանջը, որքան նյութական ու բարոյական վնասի փոխհատուցումը»:

Ի՞նչ կատարվեց 6 տարում: Ինչո՞ւ այդ մարդու կարծիքը կտրուկ փոխվեց: Ինչո՞ւ նա ցեղասպանության զոհերի թիվը կեսից իջեցրեց 1/3-ի ու նաեւ սկսեց ասել, թե Թուրքիայում «եղել է ջարդ երկու կողմերից»: Այս հարցերը պատասխան չունեն: Մի՞թե փաստերը (ինչպես նաեւ կատարվածի իրավական գնահատականները) կարող են ենթարկվել ինչ-ինչ արմատական փոփոխությունների:

Մենք գտնում ենք, որ ինչպես Հայոց ցեղասպանությունը, այնպես էլ Երկրորդ աշխարհամարտի ընթացքում իրականացված Հոլոքոսթը եւ նացիստների կողմից նախկին ԽՍՀՄ-ի եւ այլ երկրների խաղաղ բնակչության զանգվածային ոչնչացումը կասկածի տակ առնելու փորձերը մեծ հաշվով կատարված չարագործությունների արդարացումն են: Եվ, ցավոք, ստիպված ենք խոստովանել. պատմական ճշմարտությունը կարոտ է իրավական պաշտպանության, ներառյալ պատժի ոչ միայն վարչական, այլեւ քրեական միջոցները: Եվ սա որեւէ կապ չունի ստեղծագործական ինքնարտահայտման ազատության հետ:

Պատմության թուրք եւ մյուս կեղծարարները գուցե որոշ ժամանակ հարաբերական անպատժելիությունից օգտվեն սեփական ազգային տարածքներում: Սակայն դա նրանց բնավ իրավունք չի տալիս, արդի միջպետական տեղեկատվական հոսքերից օգտվելով, խեղելու բազմազգ ռուսական պետության հանրային գիտակցությունը, մեր ժողովուրդներին թերարժեքության բարդույթ պատվաստելու, քաղաքացիական հակամարտությունների սերմեր ցանելու, ազգամիջյան երկպառակություն հարուցելու:

Կասկածից վեր է, որ պատգամավոր Իրինա Յարովայի նախաձեռնությունը պահանջում է ամենայն աջակցություն: Մեզ թվում է՝ տվյալ օրինագիծը կարոտ է լրացումների ու ճշգրտումների, այդ թվում՝ նաեւ նախորդ գումարումներից Պետդումայի ընդունած մի շարք փաստաթղթերի համատեքստում: Մենք անհրաժեշտ ենք համարում թվարկումների ցանկը համալրել հետեւյալ բառերով. «... եւ Օսմանյան կայսրությունում հայերի 1915-1922 թթ. ցեղասպանության ժխտման համար»:

Մի խոսքով, անհրաժեշտ է օրենքը ընդլայնել, լրացնել (այնտեղ կոնկրետ պատմական իրադարձությունների հիշատակման առումով), ճշգրտել ենթադրվող պատժամիջոցների տեսակետից: Նախաձեռնության քննարկումը կիրականացվի՝ հենվելով քաղաքացիական հասարակության ուժերի վրա եւ բնավ ուշադրություն չդարձնելով ազատական աղիողորմ ճիչերին, որոնք ավելի ու ավելի սերտորեն միահյուսվում են նացիստների, հետեւաբար՝ նաեւ նրանց նախորդների հանցագործությունների ուղղակի արդարացման գծին: Չէ որ, վերջին հաշվով, հիստերիկան թուլության եւ պակասավորության հավաստի նշան է:

**ՎԱՐԴԳԵՍ ԱՐԾՐՈՒՆԻ**
**Ռուսաստանի վաստակավոր շինարար**
**ՎԼԱԴԻՄԻՐ ԶԱԽԱՐՈՎ**
**Սեւծովյան-կասպիական տարածաշրջանի քաղաքական ու սոցիալական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն**
**«Литературная газета», N 30, 24.07.2013թ.**
**Ռուս. թարգմ. Պ. Ք.**

# Լավրովն անհամոզիչ է համարում քիմիական զենքի մասին ամերիկյան ապացույցները

## *Բան Կի Մունի վրա ճնշում է գործադրվել*



Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովը անհամոզիչ է անվանել Սիրիայում քիմիական զենքի կիրառման վերաբերյալ Մոսկվային ԱՄՆ-ի ներկայացրած ապացույցները: Այդ մասին հաղորդում է ՌԻԱ գործակալությունը:

«Մեզ ցույց էին տալիս փաստաթղթեր, որոնք չէին պարունակում որեւէ կոնկրետ բան՝ ո՛չ աշխարհագրական կոորդինատներ, ո՛չ անուններ, ո՛չ էլ ապացույցները, թե փորձանմուշները վերցրել են պրոֆեսիոնալները», հայտարարել է Լավրովը: ՌԴ արտգործնախարարն ավելացրել է, որ ամերիկյան կողմը հրաժարվել է ներկայացնել առավել մանրամասն հաստատումներ, վկայակոչելով այդ տվյալների գաղտնիությունը:

Լավրովը նաեւ պատմել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի վրա Մեծ Բրիտանիայի եւ Ֆրանսիայի գործադրած ճնշման մասին: Լավրովի խոսքերով, 2013 թ. մարտին Սիրիայի իշխանությունները ՄԱԿ-ին խնդրել էին փորձագետներ գործուղել Հալեպ, որտեղ «պատահել էր քիմիական զենքի կիրառություն հիշեցնող միջադեպ»: Բան Կի Մունը սկզբում համաձայնել է դրան, բայց հետո փոխել է որոշումը: «Նրա վրա ճնշում էին գործադրել: Ես այստեղ ոչինչ չեմ թաքցնի, քանի որ նրանք այդ մասին բացեիբաց խոսել են: Մեծ Բրիտանիան եւ Ֆրանսիան ասել էին, որ այդ կոնկրետ միջադեպի քննության համար պարզապես տեսուչներ գործուղել չի հաջողվի», հայտարարել է Լավրովը:

Սեպտեմբերի 1-ին ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերրին հայտարարել էր, թե ամերիկացիները ստացել են Սիրիայի իշխանությունների կողմից զարին գազի օգտագործման ապացույցներ: Ավելի վաղ Սպիտակ տունը հայտարարել էր Սիրիայի պաշտպանության նախարարի եւ քիմիական զորքերի ղեկավարի հեռախոսազրույցի կալանման մասին, այդ տվյալներն անվանելով քիմիական գրոհին Ասադի կողմնակիցների մասնակցության «անհերքելի ապացույցներ»:

**Պ. Ք.**

# Մուրսիին կդատեն սպանության հրահրելու մեղադրանքով

**Եգիպտոսի նախկին նախագահ Մուհամմեդ Մուրսին կդատվի սպանության հրահրելու մեղադրանքով: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը՝ վկայակոչելով Եգիպտոսի հեռուստատեսությանը, գործն ուղարկված է Կահիրեի քրեական դատարան: Թե երբ է սկսվելու դատավարությունը, չի հաղորդվում:**

**Սպանություն եւ բռնություն հրահրելու մեջ, Մուրսիից բացի, մեղադրվում են «Մուսուլման եղբայրներ» իսլամիստական շարժման 14 անդամներ: Խոսքը 2012-ի դեկտեմբերին Կահիրեում նախագահական պալատի մոտ տեղի ունեցած եւ մի քանի զոհերի հանգեցրած բախումների մասին է: Ցուցարարները բողոքում էին Սահմանադրական հռչակագրում փոփոխություններ կատարելու նախագծի դեմ, որոնցով պետք է ընդլայնվեին երկրի նախագահի իրավասությունները:**

**Տապալված նախագահն ավելի վաղ մեղադրվել էր նաեւ լրտեսության եւ «Համաս» արմատական շարժման հետ հանցավոր կապեր ունենալու մեջ:**

**Այս տարվա հուլիսի 3-ին զինվորականները Մուրսիին պաշտոնանկ էին արել «Եգիպտոսի ժողովրդի պահանջով»:**

**Պ. Ք.**

# Ջորջ Բուշ ավագը սխալմամբ մեկնաբանել է Մանդելայի «մահը»





ԱՄՆ նախկին նախագահ Ջորջ Բուշ ավագի մամլո ծառայությունը նրա անունից սխալմամբ ցավակցություն է հայտնել Նելսոն Մանդելայի ընտանիքին: Ինչպես նշում է ամերիկյան Politico կայքէջը, Ջորջ Բուշ ավագի հաղորդագրության մեջ ափսոսանք է արտահայտվում ՀԱՀ նախկին նախագահի մահվան կապակցությամբ, մինչդեռ իրականում Մանդելան սեպտեմբերի 1-ին դուրս է գրվել հիվանդանոցից:

Բուշ ավագի մամլո քարտուղարի խոսքերով, նա սխալ էր մեկնաբանել «Վաշինգտոն փոստ» թերթի հակիրճ հաղորդումը Մանդելայի դուրսգրման մասին եւ որոշել էր, թե վերջինս վախճանվել է: Այդ կապակցությամբ ԶԼՄ-ներին էր ուղարկել ի դեպս Մանդելայի մահվան նախօրոք պատրաստված հաղորդագրությունը:

Բուշ ավագի եւ նրա տիկնոջ՝ Բարբարայի ստորագրած մամլո ամփոփագրում Մանդելան բնութագրվում է որպես ազատության մեծագույն մարտիկներից մեկը:

Նելսոն Մանդելան հայտնի է որպես իրավապաշտպան եւ ցեղախտրության դեմ պայքարող մարտիկ: Ապարթեիդի ժամանակաշրջանում իր հասարակական գործունեության պատճառով նա գրեթե երեք տասնամյակ անցկացրել է բանտում: 1994-1999 թթ. եղել է ՀԱՀ առաջին սեւամորթ նախագահը: 2013-ի հուլիսի սկզբներին 95-ամյա Մանդելային հիվանդանոց տարան թոքային վարակի պատճառով: ՀԱՀ ներկայիս նախագահ Ջեյկոբ Զումայի վարչակազմը սեպտեմբերի 1-ին հաղորդեց, որ Մանդելային դուրս են գրել Պրետորիայի հիվանդանոցից: Նրա վիճակն առաջվա պես գնահատվում է օրհասական, սակայն, բժիշկների կարծիքով, անհրաժեշտ բուժօգնությունը նրան կարող են ցուցաբերել իր տանը:

**Պ. Ք.**

ԱԶԳ

# Մշակույթ

# Վիլյամ Սարոյանը՝ 105 տարեկան

Վիլյամ Սարոյանը 20-րդ դարի ամերիկյան գրականության ականավոր ներկայացուցիչներից է: Նրա ստեղծագործությունները թարգմանվել ու թարգմանվում են աշխարհի բազմաթիվ լեզուներով:

Ծնվել է 1908թ. Կալիֆոռնիայում՝ Բիթլիսից (Արեւմտյան Հայաստան) գաղթած աշխատավոր հայ ընտանիքում: Հետագայում, արդեն մեծ գրող, նա գրելու էր. «Ես Վիլյամ Սարոյանն եմ՝ Արմենակ եւ Թագուհի Սարոյանների չորրորդ զավակը... Ես ծնվել եմ Ֆրեզնոյում - Կալիֆոռնիայի նահանգ - բայց ծնողներս բիթլիսցի են... Հոգ չէ թե մենք հայ հողից հեռու էինք ապրում, Հայաստանը մեր մեջ էր, Բիթլիսը մեր մեջ էր: Մենք էլ Բիթլիսի մեջ էինք մեր խոհերով, նիստուկացով, հիշատակներով: Երգում էինք մեր հին երգերը: Պատմում Բիթլիսի պատմությունները...»: Դեռ չէր բոլորել նրա երեք տարին, երբ վախճանվեց հայրը: Սարոյանը կյանքի դառնությունը ճաշակել է մանկությունից: Նա դպրոցում քիչ է սովորել՝ շուրջ վեց տարի: Վաղ հասակից էլ սկսել է աշխատել, եղել է լրագրավաճառ, հեռագրատան ցրիչ, սեւագործ բանվոր, գրասենյակային ծառայող ու վարձու զինվոր...



Առաջին անգամ տպագրվել է 1933-ին, Բոստոնի «Հայրենիք» շաբաթաթերթում՝ Սիրակ Գորյան ստորագրությամբ: Լայն ճանաչում է ձեռք բերել «Խիզախ պատանին թռչող ճոճաձողի վրա եւ այլ պատմվածքներ» (1934) առաջին գրքով, որի առթիվ ամերիկյան քննադատ Բ. Ռասկոն գրել է. «Ի՞նչն է հատկանշական Սարոյանի համար որպես գրողի: Սարոյանը բուռն է, պոռթկուն եւ խելացի, նա թախծոտ է, քնքուշ ու մարդկային, նա միամիտ է ձեւանում, սակայն բնավ միամիտ չէ...: Նա ատում է դաժանությունն իր բոլոր դրսեւորումներով, նա հարգում է մարդկային արժանապատվությունն ու հպարտությունը»: Գրական կյանքի առաջին տասնամյակում Սարոյանը գրել է մի քանի հարյուր պատմվածք, որոնց մեծ մասն ամփոփվել է տասից ավելի ժողովածուներում: Սարոյանը հատկապես կարճ պատմվածքի, նորավեպի ժանրում ներմուծել է տեղի ու ժամանակի իրողության հետ սերտորեն կապված սոցիալական-հոգեբանական թարմ թեմատիկա, արդիական հնչողություն ունեցող մարդասիրական բարոյական մոտիվներ, պատումի նոր ձեւեր, քնարականությամբ ու հումորով լի հնչերանգներ, բնականություն եւ ճշմարտացիություն, պատկերների ու կերպարների գունագեղություն: Սարոյանի գրական շատ կերպարներ ներկայացնում են հայկական միջավայրը՝ ազգային ավանդույթներով ու բարքերով: Հայրենիքի մոտիվը, ինչպես եւ նրա դարավոր ավանդույթները պահպանող մարդկանց կերպարները հակադրվում են ապրելակերպի համահարթեցնող չափանիշներին: Իրականության հետ նույնպիսի հարաբերության մեջ են «տարօրինակ» ու «ձախորդ» մարդկանց սարոյանական կերպարները ու հատկապես մանուկների եւ պատանիների տպավորիչ կերպարները: Դրանք համաշխարհային գրականության մեջ մտել են որպես հոգու մաքրության խորհրդանշան: Իրականության եւ երազանքի հակադրության, անհատի ներքին ազատության եւ հոգեւոր գեղեցկության, սիրո եւ բարու հաստատման մոտիվներն են մարմնավորված Սարոյանի արձակում, որոնք հետաքրքրական լուծում են ստացել նաեւ նրա դրամաներում («Իմ սիրտը լեռներում է»), «Կյանքիդ ժամանակը», «Քարանձավի մարդիկ», «Հե՜յ, ո՞վ կա այդտեղ», «Կոտրածն մանկանց», «Խաղողի այգին» պիեսները:

1934թ. լույս է տեսնում Սարոյանի «Խիզախ պատանին թռչող ճոճաձողի վրա» վիպակը եւ միանգամից ճանաչում է բերում երիտասարդ հեղինակին: Սարոյանը գրել է 1500-ից ավելի պատմվածքներ, բազմաթիվ վեպեր, վիպակներ, պիեսներ:

Նրա ստեղծագործությունների հերոսները հասարակ մարդիկ են, աշխատավորներ ու թափառաշրջիկներ, հողագործներ ու բանվորներ, մանր առեւտրականներ ու ծառայողներ, որոնց կյանքը լի է դառնությամբ, կարիքով ու զրկանքով: Նրանք, սակայն, չեն հուսալքվում ու չեն ընկրկում կյանքի դժվարությունների առաջ, այլ ամենածանր դրության մեջ էլ փայփայում են լավի հույսը, ամենամռայլ վիճակում՝ գտնում լույսի շողերը: Սարոյանի ստեղծագործությունները տոգորված են խոր մարդասիրությամբ ու պայծառ լավատեսությամբ, հասարակ մարդու ճակատագրի, նրա ապագայի հանդեպ մտահոգությամբ:

Սարոյանի շատ գործերում ոչ միայն հայի կերպարներ կան, այլեւ կա հայկական հոգեբանություն, ոգի ու ոճ, կա անհուն կարոտ հայրենի ավերված օջախի ու կորցրած ծննդավայրի հանդեպ: «Թեեւ անգլերեն եմ գրում,- գրել է Սարոյանը,- բայց ես ինձ համարում եմ հայ գրող: Գործածածս խոսքերն անգլերեն են, միջավայրը, որի մասին գրում եմ, ամերիկյան է: Սակայն այն ոգին, որ ստիպում է ինձ գրել՝ հայկական է: Ուրեմն՝ ես հայ գրող եմ»:

Սարոյանի շատ գործեր թարգմանված են հայերեն: Սարոյանը շատ էր սիրում Հայաստանը, Երեւանը: Նա մի քանի անգամ այցելել է իր նախնիների հայրենիքը, որը նաեւ իրենն էր համարում: Առաջին անգամ 1935-ին է եղել Երեւանում: 25 տարի անց՝ 1960-ին նա կրկին այցելել է եւ ուրախացած բացականչել. «...Ինձ թվում էր, թե ընկել եմ մի ուրիշ աշխարհ: Զարգացումը մեծ է, հաջողությունները՝ անհամար»:

Վիլյամ Սարոյանը վախճանվեց ԱՄՆ-ի Ֆրեզնո քաղաքում 1981 թվականի մայիսի 18-ին: Նրա կտակի համաձայն աճյունի մի մասը բերվել է Հայաստան եւ թաղվել Երեւանում՝ Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում:

Մեջբերենք նրա մտքերից՝

«Ես հայերեն չեմ գրում, բայց աշխարհին նայում եմ հայերեն»:

Ափսոս, որ չեն հորինել այնպիսի մի մրցանակ այն գրողների համար, ովքեր կարողանում են խուսափել աշխարհին եւս մեկ անպետք գիրք նվիրելու գայթակղությունից»:

«Հայերենը հայուն խորհուրդն է»:

ԳԱՐԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

## Ցուցահանդես «Զվարթնոց» արգելոց-թանգարանում

**«Եվրոպական ժառանգության օրեր» միջոցառումների շրջանակում օգոստոսի 31-ին «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի մասնաճյուղ «Զվարթնոց» պատմամշակութային արգելոց-թանգարանում բացվել է «Զորաց քարեր բնակատեղի» պատմամշակութային արգելոցի վարիչ Աշոտ Ավագյանի ստեղծագործությունների «Ժառանգության ժառանգորդը» խորագրով ցուցահանդեսը: «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ այն կտեւի մինչեւ սեպտեմբերի 15-ը:**

**Ցուցահանդեսում ներկայացված գեղանկարներն արվեստագետի երկու տարվա աշխատանքի պտուղներն են: 10 կտավներ՝ «Աղոթք», «Անհայտացող հիշողություններ», «Երկրպագություն», «Մտասեւեռում» եւ այլն, հանձնվել են արվեստասերների դատին:**

**«Հայաստանն արդեն մի քանի տարի ակտիվորեն մասնակցում է մշակութային այս խոշոր ծրագրին: «Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի մասնաճյուղ արգելոց ու արգելոց-թանգարաններում էլ այս օրերին տարբեր միջոցառումներ են անցկացվում: Ավագյանի աշխատանքները նոր ձեռագիր ու նոր մոտեցում են գեղանկարչության ոլորտում: Ներկայացրած աշխատանքների մի մասում նա անդրադառնում է Քրիստոսից առաջ 3-1-ին հազարամյակների նյութերին՝ ժայռապատկերների ներկայացմամբ: Իր խոհափիլիսոփայական մտքերը Ավագյանը յուրօրինակ ոճով է մատուցում», - նշեց ՊՈԱԿ-ի աղբյուրագիտության եւ խմբագրական բաժնի վարիչ Արգամ Այվազյանը: Նրա մեկնաբանմամբ, Աշոտ Ավագյանն այդ տեսակետից ժամանակակից գեղանկարչությանը նոր խոսք ու միտք է հաղորդում: Հեղինակի՝ Ավագյանի խոսքով էլ թեմատիկան բազմազան է՝ ժայռապատկերներից մինչեւ պատկերաքանդակներ:**

**Նախորդ տարիներին գեղանկարիչն անհատական ցուցահանդեսներ է ունեցել Երեւանում, Ֆրանսիայում եւ ԱՄՆ-ում: Մասնակցել է նաեւ Շվեյցարիայում, Սիրիայում, Կանադայում, Իտալիայում եւ այլ երկրներում կազմակերպված խմբային ցուցահանդեսներին:**

# ԱՐՑԱԽ

## «Արծվաբերդի» նոր բեմադրությունը Շուշիում

**Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանը սեպտեմբերի 1-ին մասնակցել է Շուշիի Ռեալական ուսումնարանի շենքում Անդրեյ Բաբաեւի «Արծվաբերդ» օպերայի բեմադրությանը:**

**Նախագահ Սահակյանը կարեւորել է նման միջոցառումների կազմակերպումը Շուշիում՝ այն համարելով օգտակար թե Արցախում դասական երաժշտության զարգացման, թե պատմամշակութային կոթողների պահպանման տեսանկյունից:**

**Միջոցառմանը մասնակցում էին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արք. Մարտիրոսյանը, ԼՂՀ ԱԺ խոսնակ Աշոտ Ղուլյանը, վարչապետ Արա Հարությունյանը, Արցախի եւ Հայաստանի բարձրաստիճան պաշտոնյաներ, ներկայացուցիչներ սփյուռքից եւ հյուրեր արտերկրից:**

## Ավստրալահայ ռեժիսորը ֆիլմ կնկարահանի անչափահասների գործերով արդարադատության համակարգում թերությունների մասին

**Ավստրալահայ երիտասարդ դերասան, կինոռեժիսոր Տրիստան Արդինը Ավստրալիայում մեկնարկ է տվել իր նոր՝ «Looking Out» («Եղի՛ր ուշադիր») կինոնախագծին: Ինչպես հաղորդում է «Արմենպրես»-ը՝ վկայակոչելով Armenia Online պարբերականը, ֆիլմի գլխավոր ասելիքը սոցիալական զգայուն հարցն է՝ ի՞նչ է իրականում տեղի ունենում անչափահասներով զբաղվող արդարադատության համակարգի փակ դռների հետեւում:**

**«Looking Out» դրաման բացահայտում է մի նոր աշխարհ, որի մասին քչերը գիտեն: Գլխավոր հերոսը երիտասարդ պատանի է, ով ազատազրկության մեջ է գտնվում անչափահասների գաղութում: Նա ստիպված է դիմակայել սեփական անցյալին: Արդյոք նրան կհաջողվի՞ փոխել իրեն շրջապատող ապականված միջավայրը, թե՞ ազատազրկության դաժանությունն ու դժվարությունները կկործանեն նրան:**

**Տրիստան Արդինը սովորել է մեծ ճանաչում վայելող Դրամատիկական արվեստի ազգային ինստիտուտում եւ շուրջ երեք տարի մասնավոր դասեր է վերցրել մեծանուն կատարող Էն Սվոնից: Իսկ վերջին տարին դերասանական արվեստի դասերի է հաճախել Նյու Յորքում:**

## Վաճառվում է

առանձնատուն Էրեբունի թաղամասում, Ռոստովյան փողոց, տուն 48: Ընդ. մակերեսը՝ 132 քմ, բնակելի մակերեսը՝ 86 քմ: Ունի 2 ճակատ 15 մ եւ 9,5 մ: Հարմար է բիզնեսի կազմակերպման համար: Մշտ. ջուր, գազ, ջեռուցում: Վերանորոգված է: Գինը՝ պայմանագրային:

Հեռ. 094-333-009:

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Ֆլորես» Աճուրդի Տուն» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են հետեւյալ լոտերը՝

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող՝

- ՀՀ, ք. Երեւան, Դավթաշեն համայնք, Դավթաշեն 4 թաղ, 9 շենք, թիվ 53 հասցեում գտնվող 75.4 ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 24700000 ՀՀ դրամ: Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

- ՀՀ, Արարատի մարզ, ք. Մասիս, 3-րդ թաղ., շենք 4, թիվ 38 հասցեում գտնվող 75.4 ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 11600000 ՀՀ դրամ: Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդը՝ հոլանդական եղանակով, «բաց» ընթացակարգով՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 (3-րդ հարկ) հասցեում 18.09.2013 թ.-ին, ժ. 12:00-ին եւ այնուհետեւ յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օր նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 30.12.2013թ: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Ֆլորես» ԱՏ ՍՊԸ-ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, կամ բանկային հաշվին («Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 1570005285290100 հաշվեհամարին): Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.flores.am, www.akson.am կայքերը:

# Մխիթարյանը բացեց գոլերի հաշիվը բունդեսլիգայում



Դորտմունդի «Բորուսիայի» կազմում անցկացրած պաշտոնական 3-րդ խաղում Հենրիխ Մխիթարյանը բացեց գոլերի հաշիվը բունդեսլիգայում: Ֆրանկֆուրտի «Այնտրախտի» հետ արտագնա խաղում Հենրիխը դարձավ «Բորուսիայի» խփած 2 գոլերի հեղինակը, որոնց շնորհիվ դորտմունդցիները 2-1 հաշվով հաղթանակ տոնեցին: «Բորուսիան» 12 միավորով շարունակում է միանձնյա գլխավորել բունդեսլիգայի մրցաշարային աղյուսակը:

Խաղից հետո Մխիթարյանը ֆուտբոլասերների հետ կիսել է տպավորությունները. «Բարդ հանդիպում ստացվեց, սակայն հիանալի աշխատանք կատարեցինք: Այնուամենայնիվ, կարող էինք ավելի լավ խաղալ: Դորտմունդում ինձ շատ լավ եմ զգում: Ուրախ եմ, որ բացեցի գոլերի հաշիվը բունդեսլիգայում, իսկ այնուհետեւ հաջողվեց նաեւ 2-րդ գնդակը խփել ու հաղթանակ պարգեւել թիմին»:

Մխիթարյանի ցուցադրած խաղից իր գոհունակությունն է հայտնել «Բորուսիայի» գլխավոր մարզիչ Յուրգեն Կլոպը. «Խոստովանում եմ, որ խաղադաշտում մրցակիցը մեզանից վատ չխաղաց: Սակայն մենք ունենք Մխիթարյանի պես ֆուտբոլիստ, որն իրեն հոյակապ դրսեւորեց: Կարծում եմ, որ այժմ շատերն են հասկանում, թե մենք ինչու 27,5 մլն եվրոյով գնեցինք նրան: Այսօր խաղադաշտում ջանք չխնայեցինք: Այնքան էլ հեշտ չէ նույնիսկ մեկնարկում ստանձնել առաջատարի դերը»:

Ի դեպ, մամուլի ասուլիսի ժամանակ Յուրգեն Կլոպը փոքրիկ գաղտնիք է հայտնել: Պարզվում է, որ նա եւ Հենրիխը 50 եվրոյի վրա գրազ են եկել: Եթե Մխիթարյանը 30 փորձից 7 գոլ չխփեր, ապա կպարտվեր: «Բորուսիայի» կազմում Մխիթարյանն արդեն 7 գոլ է խփել (5-ը՝ ընկերական հանդիպումներում), ուստի շահել է գրազը եւ խաղից հետո խնդրել է Կլոպին վճարել գումարը:

Հենրիխ Մխիթարյանին բունդեսլիգայում խփած գոլերի եւ հաղթանակի առթիվ շնորհավորել է Լեւոն Արոնյանը:

# «Միկան» հավասարվեց «Փյունիկին»

Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 4-րդ տուրից հետո մրցաշարում երկիշխանություն հաստատվեց: 2-1 հաշվով հաղթելով «Ալաշկերտին», «Միկան» միավորներով հավասարվեց «Փյունիկին»: Արդեն 7-րդ րոպեին անկյունայինի խաղարկումից հետո Գեւորգ Պողոսյանը բացեց հաշիվը՝ առաջ մղելով «Միկային»: 78-րդ րոպեին Վարդան Պետրոսյանին հաջողվեց վերականգնել հավասարակշռությունը, սակայն մեկ րոպե անց Վարդգես Սաթումյանը խփեց հաղթական գնդակը:

Մեծ հետաքրքրությամբ էր սպասվում «Փյունիկի» եւ «Բանանցի» մրցավեճը, որում մարտական ոչ-ոքի (2-2) գրանցվեց: 12-րդ րոպեին նախկին փյունիկցի Էդգար Մալաքյանը 11 մ հարվածով բացեց հաշիվը: 3 րոպե անց փյունիկցի Գագիկ Պողոսյանը վերականգնեց հավասարակշռությունը: 2-րդ խաղակեսում «Բանանցի» նորեկ, սլովակ պաշտպան Լուբոշ Հանզելն առաջ մղեց իր թիմին՝ բացելով գոլերի հաշիվը ՀՀ առաջնություններում: «Փյունիկին» պարտությունից փրկեց 17-ամյա Նարեկ Ասլանյանը, որը խաղավարտից 8 րոպե առաջ վերականգնեց հավասարակշռությունը:

Աստիճանաբար իր խաղը վերագտնում է երկրի չեմպիոն «Շիրակը», որն առաջնությունում խոշոր հաշվով առաջին հաղթանակը տոնեց: «Շիրակը» 3-0 հաշվով առավելության հասավ մեկնարկում անհաջող խաղացող «Ուլիսի» նկատմամբ: 3 գոլերն էլ խփեցին թիմի լեգեոնականները: 9-րդ րոպեին հաշիվը բացեց Բորիս Կադիո Դիդիեն, իսկ խաղավերջում ընդամենը մեկ րոպեում Սերժ Դեբլեն 2 անգամ գրավեց «Ուլիսի» դարպասը:

«Արարատի» կենսագրությունում նշանակալի իրադարձություն տեղի ունեցավ: Թիմը խփեց բարձրագույն խմբում հոբելյանական՝ 1000-րդ գնդակը: Գոլի հեղինակն «Արարատի» պաշտպան Նորայր Գրիգորյանն էր, որը 16-րդ րոպեին գլխի հարվածով գրավեց Արսեն Բեգլարյանի պաշտպանած դարպասը: Մինչեւ ընդմիջման գնալը սերբ հարձակվող Ալեքսանդր Ռակիչը 2-րդ գնդակն ուղարկեց «Գանձասարի» դարպասը:

Ընդմիջումից հետո թեեւ Դեյան Վուկոմանովիչը կրճատեց հաշիվը, սակայն Ալեքսանդր Ռակիչը կրկին վերականգնեց 2 գնդակի տարբերությունը: Ավելացված ժամանակում գանձասարցի Նարեկ Բեգլարյանը արձանագրեց հանդիպման վերջնական հաշիվը՝ 3-2: «Արարատը» 2-րդ անընդմեջ հաղթանակը տոնելով, բարելավեց մրցաշարային գործերը:

4-րդ տուրից հետո առաջնությունում դադար է հայտարարված, որի ընթացքում Հայաստանի ազգային հավաքականը 2 ընտրական մրցախաղ կանցկացնի Չեխիայի եւ Դանիայի ընտրանիների հետ:

**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Փյունիկ | 4 | 2 | 2 | 0 | 9-6 | 8 |
| 2. Միկա | 4 | 2 | 2 | 0 | 5-3 | 8 |
| 3. Շիրակ | 4 | 2 | 1 | 1 | 8-5 | 7 |
| 4. Արարատ | 4 | 2 | 1 | 1 | 4-3 | 7 |
| 5. Բանանց | 4 | 1 | 2 | 1 | 5-5 | 5 |
| 6. Գանձասար | 4 | 1 | 1 | 2 | 8-9 | 4 |
| 7. Ալաշկերտ | 4 | 0 | 2 | 2 | 4-7 | 2 |
| 8. Ուլիս | 4 | 0 | 1 | 3 | 2-7 | 1 |

**Ռմբարկուները**

| | | |
|---|---|---|
| Արտակ Դաշյան | «Գանձասար» | 5 |
| Սերժ Դեբլե | «Շիրակ» | 3 |
| Դավիթ Մանոյան | «Փյունիկ» | 2 |
| Սարգիս Բալոյան | «Փյունիկ» | 2 |
| Անդրանիկ Բարիկյան | «Շիրակ» | 2 |
| Ալեքս | «Միկա» | 2 |
| Ալեքսանդր Ռակիչ | «Արարատ» | 2 |
| Դիդիե Կադիո | «Շիրակ» | 2 |

# Մեսին հերթական ռեկորդը սահմանեց

Իտալական «Բարսելոնի» հարձակվող Լիոնել Մեսին շարունակում է ռեկորդներ սահմանել: «Վալենսիայի» հետ խաղում նա «Բարսելոնի» կազմում իր 23-րդ հեթ տրիկը գրանցեց: Դրանցից 17-ը նա հեղինակել է Իսպանիայի առաջնություններում, 3 անգամ աչքի է ընկել չեմպիոնների լիգայում, 2 անգամ՝ երկրի գավաթի, մեկ անգամ էլ՝ Սուպերգավաթի խաղում:

«Վալենսիայի» դարպասը խփած 3-րդ գնդակը Իսպանիայի առաջնություններում արտագնա հանդիպումներում Մեսիի խփած հոբելյանական՝ 100-րդ գոլն էր: Այդ ցուցանիշով նա գերազանցեց Հուգո Սանչեսի ռեկորդը, որը հյուրընկալվելիս 99 գոլի հեղինակ էր դարձել:

Իսպանիայի առաջնություններում Մեսին խփած գոլերի թիվը հասցրեց 220-ի: Այս ցուցանիշով Մեսին բոլոր տարիների լավագույն ռմբարկուների ցանկում զբաղեցնում է 6-րդ տեղը: Ռեկորդակիրը Բիլբաոյի «Ատլետիկում» հանդես եկած Տելմո Զարան է, որը 251 գոլ է խփել անցկացրած 277 խաղում: Մեսիից ավելի շատ գոլ են խփել նաեւ Հուգո Սանչեսը (234), Ռաուլը (228), Ալֆրեդո Դի Ստեֆանոն (227) եւ Ցեզար Ռոդրիգեսը (223): Կասկած չկա, որ Մեսին վաղ թե ուշ դառնալու է Իսպանիայի առաջնությունների բոլոր տարիների լավագույն ռմբարկուն:

ՇԱԽՄԱՏ

# Կարեն Գրիգորյանը ստանձնեց առաջատարի դերը



**Շախմատի Հայաստանի առաջին խմբի առաջնության վերջին 3 տուրերում փոխվեց մրցաշարի առաջատարը: Հիանալի ելույթի շնորհիվ Կարեն Գրիգորյանը 3 պարտիաներում վաստակելով 2,5 միավոր, շրջանցեց Տիգրան Քոթանջյանին եւ 8,5 միավորով ստանձնեց առաջատարի դերը:**

**9-րդ տուրում Գրիգորյանը հաղթեց Դավիթ Քալաշյանին, ապա ոչ-ոքի խաղաց Տիգրան Հարությունյանի հետ: 11-րդ տուրում Կարենը շահեց Տիգրան Քոթանջյանի հետ սկզբունքային մրցախաղը եւ նրանից միավորների տարբերությունը հասցրեց 2-ի: Քոթանջյանի համար շատ անհաջող դասավորվեցին 9-11-րդ տուրերը: Նա պարտվեց նաեւ Հովիկ Հայրապետյանին ու Դավիթ Քալաշյանին:**

**6,5 միավոր ունի նաեւ Լեւոն Բաբուջյանը, որը նախ հաշտություն կնքեց Արտավազդ Հայրապետյանի հետ, ապա պարտվեց Գրիգոր Դիլանյանին, իսկ 11-րդ տուրում հաղթեց Հովհաննես Գաբուզյանին: Վերջինս Հովիկ Հայրապետյանի հետ վաստակել է 6 միավոր:**

# Կրամնիկը շահում է մրցախաղը

**Շախմատի աշխարհի գավաթի խաղարկության եզրափակիչ մրցախաղում Վլադիմիր Կրամնիկը 2-1 հաշվով հաղթում է Դմիտրի Անդրեյկինին: Մրցակիցների առաջին պարտիայում Կրամնիկը հաղթեց սպիտակներով, մյուս 2 մրցախաղերում գրանցվեցին ոչ-ոքիներ: Աշխարհի գավաթը նվաճելու համար Կրամնիկին անհրաժեշտ է վերջին պարտիայում կես միավոր վաստակել: Իսկ եթե հաջողությունն ուղեկցի Անդրեյկինին, ապա հաղթողը կորոշվի լրացուցիչ մրցախաղում:**

# Մովսիսյանի գոլը հաղթանակ պարգեւեց «Սպարտակին»



**ՌԴ ֆուտբոլի առաջնության 7-րդ տուրում Մոսկվայի «Սպարտակը» սեփական հարկի տակ 2-1 հաշվով պարտության մատնեց հետնապահ «Տոմին», որը դեռեւս միավոր չի վաստակել: Առաջին խաղակեսի ավելացված ժամանակում Յուրա Մովսիսյանի խփած գոլը հաղթական էր «Սպարտակի» համար: ՌԴ ընթացիկ առաջնությունում Յուրան 3-րդ գոլը խփեց: Ռմբարկուների ցուցակը 7 գոլով գլխավորում է «Ռոստովի» հարձակվող Արտյոմ Ձյուբան:**

**«Տոմի» հետ խաղում Մովսիսյանը փոխարինվեց ավելացված ժամանակում, իսկ Արաս Օզբիլիսը խաղադաշտում 77 րոպե անցկացրեց: Ինչ խոսք, ուրախալի է, որ ՀՀ հավաքականի առաջատարները պատասխանատու խաղերից առաջ իրենց ակումբներում գոլերի հեղինակներ դարձան: Մնում է, որ նույնպիսի եռանդով նրանք խաղան նաեւ չեխերի եւ դանիացիների դեմ ու աչքի ընկնեն արդյունավետությամբ:**

# Կական վերադարձավ «Միլան»

**Բրազիլացի կիսապաշտպան Կական երկամյա պայմանագիր է կնքել «Միլանի» հետ: Պայմանագրի ֆինանսական կետերի մասին ոչինչ չի հայտարարվել: Սակայն ավելի վաղ «Ռեալը» հայտարարել էր, որ ֆուտբոլիստին անվճար կտրամադրի «Միլանին»:**

**Այսպիսով, 4-ամյա ընդմիջումից հետո Կական վերադարձավ «Միլան», որի կազմում հանդես է եկել 2003-2009-ին: Այդ ժամանակահատվածում բրազիլացին դարձել է աշխարհի եւ Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստ: Արքայական ակումբը նրա տեղափոխության դիմաց ժամանակին «Միլանին» 68,5 մլն եվրո է վճարել: «Միլանի» կազմում Կական մասնակցել է 119 հանդիպման, խփել է 29 գոլ:**

# Օզիլը հետաքրքրել է «Մանչեսթր Յունայթեդին»

**Անգլիական «Մանչեսթր Յունայթեդը» հետաքրքրված է Մադրիդի «Ռեալի» կիսապաշտպան Մեսութ Օզիլով: Վերջինս դժգոհ է արքայական ակումբում իր ներկայիս վիճակից: Նա դժգոհել էր, երբ «Գրանադայի» հետ խաղում փոխարինվել էր: Անգլիական ակումբը նրա տեղափոխության դիմաց 50 մլն եվրո է առաջարկել: Օզիլով հետաքրքրվում է նաեւ «Արսենալը»:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

